

1932.


Օ. ՅԵՐԱՆԿԱՅԱ

ՅԵՐԵՎԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ
ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ
ՅԵՎ
ՄԵՐ ՄՈՏԱԿԱ ԱՆԵԼԻՔՆԵՐԸ

ԹԵՏՐԱԿԱՆ

1932

ՅԵՐԵՎԱՆ



308(47-925)

6-84

1 DEC 2009

5 SEP 2006

320

Ա. ՅԵՐԳՆԿՅԱՆ

ՀՈՒՆԴ Ի. Ա. Յ.

ՀՀՕ. 440 3

ՅԵՐԵՎԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ

ՀԵՇՈԱՆԿԱՐՆԵՐԸ

ՅԵՎ

ՄԵՐ ՄՈՏԱԿԱ ԱՆԵԼԻՔՆԵՐԸ

Հ-25



ՊԵՏՀՐԱՍ

1982

ՅԵՐԵՎԱՆ

**1. ԲԱՅԼԵՎԻԿՅԱՆ ՏԵՄՈՎ ԱԴԵԼ ՔԱՂԱՔԱՅԻ
ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ**

Գետիքատի Տպարան
Հրատարակ. № 2150
Դրամի 7429 (թ)
Պատվեր 1080
Տիրած 3000



Կ 3230. 63

Մբարդեցին՝ ԳԱՐ. ՀԱԿՈԲՅԱՆ յիշ ՌԱ. ԳԱՍԱՐՅԱՆ

Հանձնվում է արտադրության 29 մարտի 1932 թ. Ստ. Ֆ. Ա.
Ստորագրված և տպելու 3 ապրիլի 1932 թ.

Մեր յերկրի ինդուստրացումը, մեր արդյունաբերության հսկայական վերելքը, մեր գյուղատնտեսական յերկիրն արդյունաբերական-գյուղատնտեսական զարձնելը մեր առաջ իրման առաջնակարգ խնդիր դնում ե կոմունալ տնտեսության հարցերը։ Մեր արդյունաբերության զարգացման տեմպը սերտորեն կապված է քաղաքացին տնտեսության տեմպի հետ։ Մեր քաղաքացին տնտեսությունը վոչ միայն պիտի զուգընթաց ընթանա մեր արդյունաբերական վերելքին, այլև նա պիտի դրվի այնպիսի հունիք մեջ, վոր իր հերթին նպաստի, խթան հանդիսանա մեր արդյունաբերական վերելքին։ Այս ինչ է ասում մեր կուսակցության կենտկոմի պլենումն իր հուլիսյան վորոշման մեջ։ «Յերկրի ինդուստրացումը, նոր արդյունաբերական զախների սեղծումը — դյուզական շրջաններում, ամբողջ գյուղատնտեսության վերակառուցումը սոցիալիստական հիմունքների վրա, տանում են վոչ միայն գեպի հին քաղաքների ազգաբնակության ու անենից առաջ պրոլետարիատի աճումը, այլև նոր քաղաքների սեղծումը, ներկայիս ռայոնական կենտրոնները, այսպիս կոչված՝ քաղաքների դարձնելով սոցիալիստական քաղաքների, վորոնք պետք է ապահովին լայն աշխատավորական մասսաների կուլտուրական վերելքն ու առողջապահությունը, աշխատանքի արագործականության բարձրացումը և կնոջ ու աշխատավորունու ազատագրումը տնային տնտեսության շղթաներից։ Հընդամենքի համար մզգող պայքարում սոցիալիստական շինարարության հետագա նվաճումները, սոցիալիստական ձեռնարկությունների առաջնական բարելավումը, կուլտուրական վերելքը և նրանց առողջության պահպանումը, ռեալ աշխատավարձի անշեղ աճումը, քաղաքացին տընտեսության հարցերը (բնակարանները, ջրամատակարարումը, լույսը, տաքացումը, կորուզին, քաղաքացին սրանապորտը, արտաքին բարեկարգությունը, բազնիքները, լվացքատները, հասարակական սնունդը) ստանում են խոշորագույն նշանակություն։

Համբկ(թ)կ կենտկոմի պլենումը բոլոր կուսակցական, խորհրդային, արհմիութենական և տնտեսական որդանների առաջ դնում է մաքական խնդիր՝ ամենաշուտափույթ կերպով լիկիդացիայի յենթարկելու քաղաքացին տնտեսության հետ միայն ընդհանուր զարգացումից և վճռական բեկում սեղծել նրա զարգացման տեմպերում։

Այսպիսով, քաղաքացին տնտեսության կազմակերպումը սոցիալիստական հիմունքներով, կազմում ե հիմնաքարերից մեկը, վորը նպաստելու յե մեր յերկրի ինդուստրացման տեմպերին և գրպած և մեր առաջ իրման մարտական խնդիր։

Այս տեսակետից, մոտենալով քաղաքային տնտեսության գործին, մասնակորապես կանգ առնելով Խորհրդային Հայաստանի քաղաքային տնտեսության վրա, պետք ե ընդգծել, վոր այն չափազանց հետ և մնում աճող արդյունաբերության պահանջներից և բանվոր դասակարգի կենցաղային ու կուլտուրական պահանջների սպասարկումից։ Այս թերությունների մասին Հայաստանի Կոմիտոսի կենտրոնը և ՀՍԽՀ ժողովությունների մասին Հայաստանի Կոմիտոսի կենտրոնը և ՀՍԽՀ ժողովությունների մեջ չեշտում են (թվելուց հետո այն նվաճումները, վոր ունենք այդ բնագավառություն), վոր «Եերեանի և Լենինականի բնակարանային և կոմունալ շինարարությունը գեռես հետ և մնում ժողովրդական տնտեսության ընդհանուր վերելքից և չ՛ բավարարում աշխատավոր մասսաների աճող պահանջները։ Ժողովությունն ու ՀԿ(Բ)Կ կերպուն արձանադրում են, վոր Համկոմիտությունների հունիսից ալլենում վլրուսումներից հետո քաղաքային տընտեսության մասին Յերեանի և Լենինականի քաղաքորհուրդների աշխատանքների մեջ դեռ չի առաջացել վճռական բեկում և գրյությունների 1931 թ. շինարարական պլանների գդալի թերակատարում։»

Այսպիսով, մեր քաղաքի տնտեսությունը հետ և մնում աշխատավոր մասսաների աճող պահանջից, շատ անդամ վնասում և, իր հետ մշալու շնորհիվ, արդյունաբերական վերելքի արագ տեմպերին և խանդարում յերբեմն արդֆինսվլանների կատարումը։

Անցնելով հատկապես Յերեան քաղաքին ու նրա տնտեսությանը, պետք ե ասել, վոր, չնայած մի շարք նվաճումներին, նա չափազանց հետ և մնացել ինդուստրացման տեմպերից ու նրա պահանջների բարարությունից։ Նու դեռևս չի բնթանում համբնիքաց արդյունաբերության զարգացման տեմպին։

Յերեանն իր զարգացման հեռանկարների տեսակետից ունի հակայական տվյալներ՝ դառնալու խոչոր ինդուստրիալ քաղաք։ Վորո՞նք են այդ խոչոր տվյալները։ Նախ և առաջ, Յերեանի արդյունաբերության տեսակետից մենք ունենք Սևանի հսկայական պրոբեմը, վորի լուծմանն արդեն անցել ենք, կառուցում ենք մի շարք հսկայական էկտրոկայաններ, կառուցում ենք Քանաքեռգեսը, այս տարվանից անցնում ենք Քաղաք-Գյուղուշի կառուցմանը — ահա այն հսկայական եներքիան, վորի վրա զարգանալու յև քիմիական արդյունաբերությունը Յերեանում, և այս տարվանից մենք անցնում ենք խոչոր կարբիդի գործարանի կառուցմանը 20.000 տոնն պրոդուկցիայով, վորը ծրագրությամբ հսկայական քիմիական կոմբինատի առաջին գործարանն է լինելու։ Յերեան պրա վրա ավելացնենք Յերեան—Մեսի—Աղսթմաֆա յերկաթուղու կառուցումը, վորը ճանապարհ ե բացում հսկայական հանքային հարստությունների շահագործման համար (պեմզա, ինֆուզորիտ, մարմար, ոստիղիա և այլն), վորոնք ընկած են Յերեանից դեպի Մաղկաձոր, վորոնք Յերեան քաղաքին տալու յև արդյունաբերության նոր հյուղիբի հումույթ—ապա կուսնենք, վոր Յերեանը խոչոր արդյունաբերական սոցիալիստական քաղաք լինելու տեսակետից ունի լայն հեռանկարներ։

Թեթեւ արդյունաբերության զարգացման տեսակետից տվյալները նույնպես խոչոր և բազմազան են։ Յերեանը դանում է տեխնիկական կուլտուրաների շրջանում, վորոնք անընդհատ վերելք են ապրելու Արարատյան դաշտում տարեցտարի զարգանում և բամբակագործու-

թյունը, վոր իր հետ բերում է բամբակագործությունը, նախալեռնային շրջանում (Կոտայք, Շառանի, Աշտարակ), զարգանում և ծիսախոտագործությունը, Ղարեք վառպատմը տալիս ե մեզ հսկայական նոր տարածություններ պատղառածության և այդեղործության զարգացման համար, վորոնց հիման վրա զարգանալու և նոր թափ և ստանալու կոնսերվի ու գինեգործություն արդյունաբերությունը, նրա ոժանդակ ապակու, չեմ և այն արդարացնակարգվությունը։

Ահա այն ուեալ տվյալները, վորոնք սկսել են վերածել և վերածելու յեւ Յերեանը խոչոր ինդուստրիալ քաղաքի։

Ակներն ե, վոր քաղաքային տնտեսությունը պիտի ծրագրվի և կառուցվի այնպես, վոր նա կարգանա լիովին սպասարկել լայն ինդուստրացման յենթարկվող քաղաքի բոլոր կուլտուրական տնտեսական գործառնությունները, կոմունալ շինարարությունը պիտի ընթանա արդյունաբերական վերելքին համընթաց, նա պիտի ստեղծի այն բոլոր նախապայմանները, վորոնք անհրաժեշտություն են ինդուստրիալ քաղաքի հռմար։ Նա պիտի դառնա սոցիալիստական քաղաք իր կենցաղային բոլոր հարաբերություններով՝ համապատասխան բանվոր դաստիարակի աճող պահանջին։ Քաղաքային շինարարությունը պարզ ե, չի կարող ընթանալ առորյա պահանջների շրջանակում, այլ նա պիտի ունենա լայն ծրագրված բնույթ՝ համապատասխան արդյունաբերական վերելքին, նրա հետագա զարգացմանը։ Պարզելով մեր առաջ արդյունաբերության զարգացման հառանկարները, այդ հիման վրա պիտի ուղարկել ներկա տերիտորիայի վրա, կարո՞ղ ե նա ներկա տերիտորիայով գառնալ սոցիալիստական քաղաք իր քաղաքային տընտեսությամբ, իր կուլտուրական ու կոմունալ լայն շինարարությամբ։

2. ՖԱԼԱՔԻ ՏԵՐԻՏՈՐԻԱՅԻ ՀԱՐՑԸ

Յերեանի հետագա արդյունաբերական զարգացման ու քաղաքային տնտեսության հսկայական հեռանկարներն ամենից առաջ մեր առաջ դնում են քաղաքի տերիտորիայի խնդիրը։ Բավարա՞ր ե այն տերիտորիան, վոր քաղաքն ունի իր տրամադրության տակ, կարո՞ղ են կառուցվող և կառուցվելիք արդյունաբերական հսկայական ձեռնարկները դասավորվել քաղաքի ներկա տերիտորիայի վրա, կարո՞ղ ե նա ներկա տերիտորիայով գառնալ սոցիալիստական քաղաք իր քաղաքային տընտեսությամբ, իր կուլտուրական ու կոմունալ լայն շինարարությամբ։

Նկատի ունենալով քաղաքի ներկա տերիտորիան, այս հարցին կառուցվել յեւ տալ միմիայն բացասական պատասխան։

Ինչպիսի՞ հողային ուեսուրաներ ունի Յերեան քաղաքը ներկայումս և Ստորև բերվող աղյուսակը տալիս է հողատեսակների քանակը և պատեհերը։

Քաղաքացիների տեսչություն լինելի ընդհանուր տարբառների վեհանություն	Բնակչություն	Համայնքային բանի ջարաբարձության համարը	Կաթոնականություն թյան համարը	Արդինելի համար	Արտաքայլություն	Անսունիւն և պար- կել	Կոչ պիտուանի հարկը	Վարչականություն	Բնակչություն	Համայնքային կատարելի համարը	
5700	760	470	120	1147	2176	18	470	539	703	75	4922

Բնակելի-կառուցելի հողամասերի տարածությունը նոր հաստակագծով նախատեսում է 2105 հեկտար, վորից առաջին հերթին տրամադրվելու յէ 1105 հեկտար հետևյալ գասավորությամբ.

ԲԻՆԱՐՆԵՐԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԾԻՆԻ և ՌՈՒԲԵՆ- ԽԵՂՄ պատրիարքութ- յան համար			Վ	Ռ	Խ	Ց	Հ	Ց
ԲԻՆԱՐՆԵՐԻ ԼԱՍՏԵՐԵՐԻ	%	0/0	ՓԱՐՊՐԵՐԻ ՀԱՅՈՒՐ	%	0/0	ԲԱՆԱԿԱ- ՆԱՅ ԲՐԵՋՈՒՆ	%	0/0
1105	703	63,3	218,5	19,8	161	14.5	22,5	2.1

Այդ տարածությունը յուրացնելուց հետո, ողբազործության չշանակի մեջ են դրվելու պահեստային 1000 հեկտար հողամասեր, փորոնց գասավորելով նույն տոկոսային հարաբերությամբ, կսառանք վետերալ պատկերը.

Վերև բերված թվերը պարզ կերպով տպացուցում են, որ Յերեգանի ներկա տերիտորիան չի կարող բավարարել քաղաքի աճող աղքարնակության պահանջները և հնարավորություն տալ նրան դառնալի իրաւուս սոցիալիստական քաղաք՝ բանվոր դասակարգի պահանջները խովին ապահովող կոմունալ սպասարկման տեսակետից։

Յերևանն ազգաբնակության տեսակետից ունի բուռն աճում և յեթե նրա զարդարման հեռանկարներն ընդունենք 400.000 ադամանակու-

թյուն, տպա նեփկա տերիստրիվագի ըրջանակում յուրաքանչյուր չնչեն ընկնելու յե 33,5 քառակուսի մետր, վորը միանդամայն անհանդուր- ժելի յե:

Սպահական քաղաքը չի կարող լինել բարեփռական քաջորդական գործառնությունների նման հակառապղձապահական սպայմանների մեջ, այն քաղաքացիների, ուր առաջացել են աննորմալ խտացում, անհանդուրժելի ժիոր՝ հասուեկ կապիտալիստական խոշոր քաղաքների:

Այս տեսակենտից Յերևանի տերթառիայի պահմանների ընդլայնումը ներկայացնում է անհրաժեշտություն նրա հետագա զարդացման առաջնաշից, իսկ այլ զարդացումը պարզ է, զոր պիտի ընթանա բացառադես սոցիալիստական ուղղությամբ, սոցիալիստական զարդացման պահմանները բավարարող ու ապահովող դժույ:

Յելնելով մեկ շնչի մինիմալ չափով անհրաժեշտ նորմայից—ըստ կեմբ-կառուցանելի 100 մետր, հաստրակական ոգտագործության համար 50 մետր, քաղաքում 400-000 բնակիչ ունենալու դեպքում՝ ըստ կեմբ-կառուցանելի կարգիների համար հարկավոր կլինի 4000 հեկտար (66,6 տոկոս) և ընդհանուր ոգտագործության համար 2·000 հեկտար (33,4 տոկոս), ընդհանուր 6000 հեկտար տարածություն։ Յեթե սրա լրա ավելացնենք, վոր խոչոր քաղաքներին կից անհրաժեշտ է ունենալ մերձքաղաքային տնտեսություններ, առաջին հերթին բանջարաբուծական ու պտղաբուծական—քաղաքի պարենավորումն ուղասարկելու համար, թարմ բանջարեղեննի և պառավերքի անսամբլետից—ապա միթիայն հարցուր հազար աշխատավորությանը բավարարելու համար անհրաժեշտ է այդ նպատակի համար 3·033 հեկտար տարածություն։ Այսպիսով, ուրեմն Յերևան քաղաքի նորմալ զարգացումն ապահովելու համար անհրաժեշտ է մինիմում 9033 հեկտար տարածություն։ Հողային այս տարածության դիմաց քաղաքն ունի ընդամենը 5700 հեկտար։ Քաղաքի տերիտորիայի, հետեւապէս սահմանադիր, ընդլայնման հարցն անհետաձգութիւ պահանջ է։

Տերիստորիայի տեսակետից ի՞նչ ուղղությամբ պիտի զարդանա քա-
լուքը և վճռ առածառաթան հաշվին նա պիտի ընդլայնվի: Եթեան
առաջաքը ներկայութեան զարդանում և գլխատվածի հարավ-արևելքան և
յուսիսային ուղղությամբ, այսինքն՝ կայսրանի ուղղությամբ և դե-
պի բանարեռ:

ՅԵՆԵՐԻՎ քաղաքի զարգացման այս ուղիներից, անհրաժեշտ է քարտին միացնել Քանաքեռը, Վերին և Ներքին Շենգավիթները, Վերին Ներքին Զարդարները, Նորաշափիթը, մյուս կողմեց՝ Կողը, Նոր Մալաթիան, Ղարնիք ներկայանում են քաղաքի տերիտորիայի բնական արունակությունը և գտնվում են քաղաքի սահմանագծից գորքա: Ի այցիվելիք ութ գյուղերի տարածությունը կազմում է 6890 հեկտար, Որից բնակելի վայր՝ 430 հեկտար, ծառատան՝ 391 հեկտար, վարեա-տաղ՝ 3.592 հեկտար, արտավայր՝ 756 հեկտար, վոչ պիտանի հողեր ներկայումս՝ 1656 հեկտար: Արանց միացումով քաղաքի հողակին առածությունն ավելանում է 6890 հեկտարով: Քաղաքի սահմանա-գծն ընդարձնելով և հողային տարածությունը հասցնելով 12.590 հեկ-տարի, մենք առաջնորդում ենք սոցիալիստական քաղաքի զարգացումը, սույն գործելով պայմաններ, բաւոն թափով անող սոցիալիստական շինա-արության և աշխատավոր մասսաների առողջապահության համար:

Յ. ԳԱՂԱՔԻ ՀԱՏԱԿԱԴՐՄԱՆ ՀԱՐՅԸ

Պարզ է, վոր առանց հատակադման անկարելի յե կառուցել քաղաք կամ մինչև իսկ արգելվում և Միութենական հատում օրենքով հաջթառիքյան հատականալի յե հատակադման պահանջը, մանավանդ կառուցվելիք սոցիալիստական քողաքի:

Հայտնի յե, վոր մենք ունենք քաղաքի մի մասի հատակադմը մեռյա կազմած միարեմիլոր թամանյանի կողմէց և հաստափած մեր վերապատճեն որդանների կողմէց: Սակայն նա անբավարար է, վորովհետեւ ընդգրկում և քաղաքի տերիտորիայի մի մասը միայն և այն ել ունի եռքիցային բնույթ և լրացվում, և շինարարության պրոցեսում:

Ուստի քաղաքի ամբողջական հատակադման խնդիրը, վոր կազմում և քաղաքային տնտեսության զարգացման նախապայմանը, իբրև հմտական ու առաջնակարգ խնդիր իր ամբողջ հասակով ծառացած և քաղաքի առաջ:

Քաղաքի տերիտորիան ընդլայնելով 6891,80 հեկտարով և ստանալով նոր տերիտորիա 12.590 հեկտար տարածությամբ, անհրաժեշտ է անցնել նրա ամբողջական հատակադմանը, վորը պիտի կազմի այն ընդհանուր կանոն, վորի վրա պիտի կառուցվի սոցիալիստական քաղաքի վարչությունը:

Քաղաքի հատակադմումը չի կարող ունենալ «զուտ գծաղրային» բնույթ — ընդհակառակը, նա պիտի տա սոցիալիստական քաղաքի ուրիշակերպ, նշի նրա զարգացման ուղիները, նա նախորոք պիտի վորոշէ քաղաքի վերելքի ուղիներն ու բնույթը:

Հակառակ կապիտալիստական քաղաքների, մեր սոցիալիստական Յերեան քաղաքի հատակադմումը պիտի տարվի այն ուղղությամբ, վոր դրյություն չունենա կենտրոնի և ծայրամտական հակադրություն և շեշտված տարբերությունը: Հատակադմումը թե՛ կուլտուրական, թե կոմունալ և թե՛ կենցաղային սպասարկման տեսակետից քաղաքի բարոր մասերի մեջ պիտի մտցնի համաշակություն: Սա անդասակարդ հայտնարկության սպասարկման անհրաժեշտ պահանջ է:

Հակառակադումը հիմնականում պիտի ուրվագծի քաղաքի սոցիալիստական բովանդակության ուղին: Բնակարանային շինարարությունը պիտի զասալորվի այնպես, վոր նա, մի կողմէց, լիովին սպասարկի սոցիալիստական կենցաղի բորոր պահանջները, մյուր կողմէց՝ զարկ ուրգյունարեական զարգացմանը և ենթադիմության նպաստականացարար ուղագործմանը: Փողոցների զասալորումը կրի այնպիսի բնույթը, վոր ուն մի կողմէց զյուրացնի կոմունալ սպասարկման զործը և հեշտացնի ու բնակարանի բիջեւ, հեշտացնի քաղաքի մշտական ողափոխությունը և տա առողջապահության ուժենալոյն պրոֆիլ:

Միաժամանակ՝ քաղաքի հատակադմումն իրեն նպաստակ պիտի դնի մտցնելու համաչափություն ու սիստեմ՝ կոյուղու, ջրի մատակարարման, կապի (ռազիո, հեռախոս, հեռողիք, փոստ) գործի մեջ, նրանց համարտատախան դասավորման տեսակետից: Սրանք հատակադման հիմնական խնդիրներն են, առանց սրանց լուծման հատակադմումը չի կարող կրել այն բնույթը, վոր անհրաժեշտ և մեղ, չի կարող տալ սոցիալիստական քաղաքի ուրիշակերպի:

Մենք որ առաջ պիտի ավարտենք քաղաքի հատակադմումը, բայց բարելով վերը շեշտված պահանջները: Քաղաքի շինարարությամբ պիտի ընթանա բացառապատճեն համապատասխան հատակադման պայմաններին և միանդամայն գերծ լինի անարխիկ շինարարության բնույթից:

4. ԳԱՂԱՔԻ ԿԱՆԱՀԱՊՐՄԱՆ ՀԱՐՅԸ

Քաղաքի կանաչաղարդման-ծառատնկման հարցը սոցիալիստական քաղաքի շինարարության հիմնական խնդիրներից մեկն է: Ծառատնկումն անհրաժեշտություն և թե՛ կիմայական պայմանների մեղմացման և թե՛ քաղաքի ուղարկության և ֆիլտրացիայի տեսակետից: Առավելապես Յերեան քաղաքի համար, վորն ունի ցամաքային կլիմա, կանաչաղարդումը հրամայական պահանջ է:

Յերեանը յենթակա յե սարահարթերի աղդեցության, վորաեզրից զեղով դաշտավայրը հոսում է ահազին քանակությամբ սառն ու, շամփանց իջեցներով Յերեանի ասրաթության չափը: Մինին տեմպերանուրան լինելով 5—7 աստիճան (Յելսիուսի), մետրվարին համեմում և 25—27 աստիճանի: ոչոստուսին և հուլիսին ասրաթության աստիճանը բարձրանում է +25—26 աստիճանի: Ծովի աղդեցության բացարձյությունը Յերեանի վրա, ամել և այն արդյունքը, վոր մենք ունենք միանդամայն ցամաքային կլիմա:

Նման կիմայական պայմանները մեր առաջ զնում են կլիմայի մեղմացման հարցը, առաջին հերթին՝ կանաչաղարդման միջոցներ:

Կանաչաղարդումն իրեւ խնդիր գրել են նաև կապիտալիստական քաղաքները, բնական և, վոր սոցիալիստական քաղաքն իր շինարարության հիմնական խնդիրներից մեկը պետք է զարձնի այդ: Վիեննան գետ յերկու հարյուր տարի առաջ զրել եր քաղաքի ըրջապահի կանաչաղարդման հարցը, և այդ քաղաքն այժմ թե՛ իր ըրջակայքում և թե՛ ներսում տնի. Հակայական կանաչ առաջատարություններ: Ենթալմում Տիրագործքն ուրկը գտնվում է քաղաքի կենտրոնում և ունի 255 հեկտար առաջնություն: Հայտ-պարկը Լոնդոնում բոնում է 146 հեկտար ամեղ. նրան հարեան մի ուրիշ պարկ՝ նույն կոնդոնում՝ 200 հեկտար: Դեղողնենց գլխավոր պարկն ունի 164 հեկտար ասրաթություն և այն:

Իրար հակառակատեր են ներկայացնում Խորհրդային Միության մեջ յերկու Ֆերգանան: Մեկը՝ չին Ֆերգանան՝ ներկայացնում է չին կապի տների մի խառնաշփոթություն, նեղ փողոցներով ու փակուղիներով, նրանից 7 կիլոմետրի վրա—նոր՝ խորհրդային Փերգանան—Թաղված և կանաչի մեջ, կա ծառերի այնպիսի խառնություն, վոր տները չափ աղբում չեն յերեւում, իսկ փողոցներն առաջին հայացքից թողնում են անտառային ուղիների տպավորություն: Փողոցներում ծառերը կողմէց զարգացնի պահանջական քաղաքի աղդեցությունը: Կարգությունը աղդեցությունը ծառերի աղդեցությունը յերեւում կարգացնի պահանջական քաղաքի աղդեցությունը և այս անդամ չորս շաբաթ, կազմում են բնական միջանցքներ, վարեկից անցնում են աշխատավարդները, միանդամայն աղատ լինելով կիմիչ աղդեցությունից:

Ներկայումս, յերբ աստիճանաբար վոչչանում է չին, սարգարի Յերեանը և նրա աղեղը կառուցվում է մի նոր, սոցիալիստական Յերեանը՝ նոր հատակադմում և հակարգական հոյակար շենքերով, կանաչաղարդման պահանջը մեր առաջ ծառացած է. իբրև անմիջական խելի:

Ներկայումս ամենի քան յերբեք՝ աշխատավորության կողմից պահանջել զգացվում շփուլ ընության հետ՝ ուժերի վերականգնման և թարմացման համար։

Հասարակական խոչոր պարկերի կառուցման, քաղաքի շրջապատի կանաչապարզման, փողոցների ծառատնկման և կոռուպերատիվ խոչոր բարերի կանաչապարզման գործին մենք պետք են անցնենք ամմիջաղութեան։

Քաղաքի և նրա շրջակայքի կանաչապարզման հարցը հիմնական նշանակություն ունի, քաղաքի վրա տիրապետող քամիներից և դրանց ըլքած փոշուց ազատվելու անսակետից (փոշի, վորը շատ անդամ անհանուն է յև պարձում փոշուները), ինչպես և առաջարակ քաղաքի ընդհանուր Փիլտրացիայի տևակիւթից։

Այս ծրագրի համաձայն, վոր կազմել է Քաղխորհուրդը Յերևան քաղաքի ներսի և շրջակայքի կանաչապարզման վերաբերյալ, կանաչով պետք ե պատվի ընդհանուր տոքառաթյան 50 տոկոսը։ Հիմնական նշանակություն և որպում, առաջին հերթին քաղաքի սարալանջերի ամսառացման գործին։ Քաղաքի արտաքին կանաչ դոտին ընդգրկում և Քաղաքունքունքները, սկսած Զանգվիթ ձորից մինչև Գեղարշատի ձորը, լայնությամբ մի կիլոմետր, յերկարությամբ 3,6 կիլոմետր։ Այս անսարացումը, վորին անցել և քաղաքը և վորին խոչոր թափ պետք է որիի այս տարի, նպատակ ունի մեղմելու այդ կողմից փչող քամիների վնասակար ազգեցությունը քաղաքի վրա։ Այս տարածությունից 175 հեկտար հատկացված է «հանգանի և կուլտուրայի» պարկի կառանքունքն ու ծառատնկման գործին, վորի գեղարվեստական ձևավորումը հանձնված է հատուկ կոմիսիայի։ Քաղաքի ներսում կանաչապարզման ընդհանուր կոմիսար յերկարություն՝ 45 հազար մետրում 90—150 մետր։ Եթանաձեռ բույսաբն այդ տեսակետից պիտի հանդիսանու ամենասուզը վայրն անցորդների և հանգստացողների համար։

Առանձին գորկ պետք է տալ բուսաբնական այգու կազմակերպման գործին՝ Զանգվիթ ձորում։ Միաժամանակ քաղաքի ընդհանուր հասակառձման պրոցեսում պետք է կառուցել տարբեր թաղեցում բաղմանիվ։

Այսպիսով պարզ է, վոր քաղաքի և նրա շրջակայքի կանաչապարզման խնդիրը հիմնական նշանակություն ունի կիմայի մեղմացման տեսակետից, քաղաքը քամիներից ու փոշիներից աղատելու, քաղաքի մըշտական Փիլտրացիայի և աշխատավորության ազատ ժամանակ հանդիպ ու բնության հետ չփոխութեանից։ Ամենի և, վոր այս խնդիրը լուծմանը Քաղխորհուրդը պետք է անցնի ծրագրված կերպով և համարուի։

5. ՔԱՂԱՔԻ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԽՆԴԻՐԸ

Քաղաքի ներքին սոցիալիստական բովանդակության հետ միասին, հիմնական նշանակություն ունի նաև քաղաքի արտաքին գեղարվեստական ձևավորումը։ Արտաքին գեղարվեստական ձևավորումը պետք է ըստի սոցիալիստական բովանդակությունից, պետք է կազմի քաղա-

և վիճի գեղեցիկ քաղաք։ Վոչ մի դասակարգ չի կարող այնպիսի բարձրության վրա հասցնել գեղարվեստը, վորքան բանվոր դասակարգը թարմացման բոլոր մասցած բնագավառներում, նույնպես և այս բնագավառում բանվոր դասակարգը հրապարակ է համերու։ Հսկայական թափ, հսկայութան թափ։ Քաղխորհուրդի առաջնակարգ խնդիրներից մեկը պետք է վիճի քաղաքի գեղարվեստական ձևավորումը։ Առաջին հերթին նա պետք է իր ձեվալորումն ստանա հսկայական պրոցեսում, կառուցումների գեղարվեստական դասավորումը պետք է ընթանած ըրգված ձևով և ճաշակով։ Առանձնահատուկ ուշադրություն պետք է դարձվի վոճի խնդրին։

Քաղխորհուրդն ունի իր գեղարվեստական մեկցիան, վոչ մի շենք չպատի կառուցվի Յերևանում, մինչև դրա նախագիծը հավանություն չպահպահվեստական սելցիայի կողմից քե նրա տեղի դասավարման, քե վանի, քե ներքին բովանդակության, քե հարմարությունների տեսակետից։ Այս պետք է կազմի ամեն մի կառուցման նախապայմանը։

Բնականորեն՝ յուրաքանչյուր կառուցում իր ներքին բովանդակության տեսակետից պետք է նպաստի սոցիալական կենցաղի պահանջներին, առոխապահական անհրաժեշտ պայմաններին և պահանջվող հարժարություններին։ Վոճի՝ արտաքին ձևավորման խնդրում մենք ունենք մեր կուսակցության առաջնորդ՝ ընկ. Ստալինի դրույթը՝ «ըստ բովանդակության՝ սոցիալիստական, ըստ ձեվի՝ աղդային»։

Մայ յե այն հիմնական ուղին, վորով պետք է ընթանա մեր շինուարությունը։ Քաղաքի ձևավորման պրոցեսում մենք պետք է ուղեցույց ունենանք ընկ. Ստալինի այս հիմնական ցուցումները։

Պարզ է, վոր մենք հիմնովին պիտի աղատադրվենք Փեղալական-կղերական վոճից, նրա բոլոր մասցորդներից, պայքարելով նրա բոլոր արտահայտությունների դեմ։ Այս ակներն են։ Սակայն մենք սրան հարակից միաժամանակ պետք է աղատադրվենք նաև բուրժուազիայի անկաման շրջանի վոճից, վորը հրամցվում է մեղ շատ անդամ իրեւ ժամանակակից պրոլետարական վօճ։ Յերկուան ել անհանդուրժելի յին բան-վոր գառակարի համար և անհարազատ։

Այսպես, ուրեմն, մեր կառուցումներն արտաքին ձևավորման տեսակետից պիտի լինեն «սոցիալիստական» ըստ բովանդակության և աղդային ըստ ձեվի՝ բանվոր դասակարգն ստեղծում է և ստեղծելու յի իր սոցիալիստական տնտեսության, սոցիալիստական շինուարության ստեղծագործական պրոցեսում, նրա բովանդակության մեջ զնելով իր ստեղծագործական հանձարը, միաժամանակ արտադրական պրոցեսում հրապարակ հանելու նաև իր աղանդին այդ ձևավորման զործում։ Այստեղից ե, վոր յերիտասարդ ճարտարապետները պիտի վերցնեն իրենց հղացումները և վոչ թե կորբյուլեների «կոնսորտուկ-գերցնեն իրենց հղացումները»։

Այս գենես ձևակերպված ու ամրողացած պրոլետարական վոճ ըստները։ Պրոլետարական վոճ՝ «սոցիալիստական» ըստ բովանդակության և աղդային ըստ ձեվի՝ բանվոր դասակարգն ստեղծում է և ստեղծելու յի իր սոցիալիստական տնտեսության, սոցիալիստական շինուարության ստեղծագործական պրոցեսում, նրա բովանդակության մեջ զնելով իր ստեղծագործական հանձարը, միաժամանակ արտադրական պրոցեսում հրապարակ հանելու նաև իր աղանդին այդ ձևավորման զործում։ Այստեղից ե, վոր յերիտասարդ ճարտարապետները պիտի վերցնեն իրենց հղացումները և վոչ թե կորբյուլեների «կոնսորտուկ-գերցնեն իրենց հղացումները»։

ահվիզմից», վորեց բուրժուազիայի անկման ըրջանի հոտ և մէշտաճ՝ և այն ել այնպիսի հետո, վորի կողքից անցնելիս պետք է քիթ բռնեն: Կան մարդիկ, վորոնք կարծում են, թե պրոլետարական վոճը, սկսած Արխանգելսկից մինչև Սահարայի անապատը, լինելու յէ միտունակ: Սրանք կամ նիշիլստաներ են, կամ մանը բուրժուական հոսմոպղաներ, սրանք վոչ մի առնչություն չունեն մարդու-էլենից յան: Վոճը, վոր հիմնականում բլիսում և արտօլերական պրոցեսներից, շաղկապիած ե ներքին բովանդակության հետ, կրում է համապատասխան դասակարգի կնիքը, միաժամանակ եր վրա կրում է շրջանի կլիմայական պայմանների, աշխարհագրական դիրքի, շինոյթերի, ստեղծագործող աշխատավորության մտապատկերների նյումուների աղղեցությունը: Ահա այստեղից ե բլիսում «աղղային բառ ձեի»:

Այսպիսով քաղաքի գեղարվեստական ձեվավորման գործում, Քաղիսորհուրդը, ունենալով մեր կուսակցության ղեկավար պիծը, պիտի հատուկ ուշադրություն դարձնի քաղաքի գեղեցկության վրա:

Մեր կարծիքով՝ շենքի բարձրությունը արձնի անցնի 3-4 հարեւոց: Կապիալիստական յերկնամարդ տներն անհանդուրժելի յեն սացիալիստական քաղաքի համար թե աղղաբնակության ինձողման տեսակիւթց, վոր առանձնահաստուկ և բուրժուական քաղաքների հակառազդական պայմաններին, և թե մեղ մոտ՝ Յերևանում՝ տները հակարկացարժային պահանջներին համապատասխան կառուցելու անհամարժեցության վետելու:

Շինարարության բնագավառում մի հանգամանքի վրա առանձին ուշադրություն պիտի դարձնել:

Կան թե հին և թե նոր ճարտարապետների մեջ մարդիկ, վարչուր էրի կարծում են, վոր վոչ թե շինարարությունը պիտի հարմարուի մարդկանց պահանջներին, այլ, ընդհակառակին, մարդիկ ողիսով հարմարին շինարարությանը: Որինակ՝ բարձրահասակները ողեաք և պառնան ցածրահասակ, վորպեսի այդ ճարտարապետների շինած ցած դոներով անցնելիս նրանց գլուխը չդիպչի դուն ճակատին: Կամ թե մարդիկ, յեթե ուզում են ոդտվել սեղանից, ապա պետք ե սեղանները պատրաստել տան մի թիղ լայնությամբ և յերկու թիղ յերկարությամբ, վորպեսի այդ ճարտարապետների շինած դոներով համարափորություն ունենան ներս տանել:

Այստեղ ահա Քաղիսորհուրդի տեխնիքական մասը պետք է հարաբերակ դա վերջ տալու քաղաքի շինարարության մեջ մինչև այժմ յեղած այլանդակ թերություններին: Պետք ե թույլատրվեն անպիսի կառուցմանը, վորոնք ունենում են անհրաժեշտ և պահանջվող հարմարությունները: Առհասարակ Քաղիսորհուրդի դեղարվեստական սեկցիան իր ձեռքը պիտի առնի քաղաքի շինարարության հսկողությունը թե գեղարվեստական ձեւավորման տեսակետից, հենվելով քաղաքի լայն բանվորական մասսայի վող աշխատավորության ոժանդակության վրա: Սա սոցիալիստական ուղիով կառուցմող քաղաքի անհրաժեշտ պայմաններից և տուաշակարդ ինդիքներից մեկն է:

6. ԿԱՇԱԽԱԼ ՏՆՏԵՍԱԽԹՅԱՆ ԽՆԳԻՐՆԵՐԸ

Յերեանը չափազանց հետամնաց քաղաքների շարքին է պատկանում՝ կոմունալ ձեռնարկությունների տեսակետից: Մի քաղաքը, վերը շուշի կոյուղի, նա փաստորեն չի կարող դասվել ժամանակակից քաղաքների շարքը: Կոյուղին քաղաքի սանիտարական պայմանների առավելաց ամենահիմնականն է, նրա բացակայությունը քաղաքի արմատական բացերից մեկն է: Կոյուղու կառուցումը, իրեւ հարվածային խնդիրը, դրված և կոմունալ ծնաեւության առաջ: Ներկայություն արդեն պատրաստ է կոյուղու հատակագիծը հիմնականում, անհրաժեշտ արագ մշակել նրա մանրամասնությունները և անցնել նրա կառուցման դորձին: մինչև տարվա վերջը պետք է կառուցել անողայնական կոյուղու հիմնական մաղիստրալը, կոմունալ ծնաեւությունը պետք է մարդիկացիայի յենթարկի իր բոլոր ուժերը՝ այս գործն առաջիկա առարիներում միովին գլուխ բերելու համար: Ճիշտ է, խնդիրը բարու է, պահանջում և ֆինանսական խոշոր ներդրումներ և բավականաչափ բարդ աշխատանք, սակայն պետք է բայց կիրորն լծվել այս գործն և քաղաքի այդ կարեւոր բացնել:

Քաղաքի կոմունալ ծնաեւության բնագավառում շրջանակության 2-րդ հիմնական խնդիրը ջրամատակարարումն է: Նախկին ջրմուղը վագուց դրազարի և բավարարելուց տարեցտարի հսկայական չափով աճող ազգաբնակչության կարիքները: Բացի աղղաբնակության աճումից, միաժամանակ աճում և ջրի պահանջը բաւրագունչյուր շնչի համար, վարս արդյունք և աղղաբնակության կուրուրական մակարդակի բարձրացման, նրա կալուսուրական աճող պահանջների: Մենք արդեն վերջայն ենք նոր ջրմուղի կառուցման դորձը, նորիկին ջրմուղը մեղ առաջ էր որական 500.000 վերդյուր ջուր, նոր ջրմուղը, վորը վերջնականապես ավարտվելու յև հենց այս փետրվարի վերջներին, մեղ առաջ շե 4.500.000 գույլ ջուր, մի քանակ, վոր յերկար ժամանակ հիմնական առաջնորդում և ջրի պահանջը: Սակայն այդ քանակությամբ ջուրը մեղ սանառում ենք քաղաքի ծագրությունը, անհամարժեշտ և այն բաշխել ըստ քաղաքամասերի: Անհրաժեշտ է կառուցել նոր ջրային ցանց քաղաքությունը կարեւոր իմեկ համաշափ կերպով ջուրը հանձնել սպասարկելու պայմանականությունը և արդյունաբերությանը: Սա այսորվա մեր հիմնական խնդիրների է: Ճիշտ է՝ այդ խնդրում մենք կանդնած ենք վարությունների առաջ: Ջրախողովակների բացակայությունը ուղարցման և այս կարեւոր դորձի արագ կաղմակերպումը, սակայն կոմունալ ծնաեւությունը պետք է սեղություն բարձրացները լուծելու աղղաբնակությունը ջրով բավարարելու խնդիրը: Պետք է այս տարի ջրային ցանցի կառուցումը վերջացնել քաղաքի հիմնական շրջաններում:

Յերրորդ խոշոր հարցը, վոր պետք է լուծի կոմունալ ծնաեւությունը, ուղ բաղնիքների հարցն է: Մեր աշխատավորության կուրուրական մակարդակը մեծապես բարձրացել է, և գոյություն ունեցող բաղնիքները շնչ կարուցման բարձրին, վորն արդեն պահել ենք նոր, խոշոր բաղնիքի կառուցման գործին, վորն անհրաժեշտ պետք է արագարարել ներս աշխատավառին պետք է արագարարել աշխատավառին սեղամանին:

սուկայն բավականանալ մեկ կամ յերկու խռորապույն բազմիքներէ
կառուցումնով՝ չի կարելի։ Յեղնելով այն հիմնական առանձիւթից, վոր
բաղաքի յուրաքանչյուր մասը սկսու քե սպասարկի համաշտի և հա-
վասար կերպով, անձը բաժեշտ է բաղաքի առցեր մակրում կառուցի տուաճնեն, գործը տիսի բազմիքներ։

Սի խողիք ևս կոմունալ շինարարության մէջ ոմի իր կարևոր տեղը : Դա անհրաժեշտ չափով և հարմար հասարակական արտաքննութեան ունեցած անհնարին է : Քաղաքների հետամնացության հպմար բնուու և հասարակական արտաքննութեարքի պարագաների պարագաների մաքրությունը պահանջված բարձրության վրա դրված քաղաքներում զուք կտեսնեք հարթաքաղույն արտաքննութեարքի հոկայական ցանց : Մայիսիստական քաղաքներու որ առաջ պետք է բավարարի այս անհրաժեշտ պահանջը : Քաղաքացին տնտեսությունն իր շինարարության պրոցեսում տէքրածուց չպետք և անի այս կարեւոք պահանջը, և հասարակական արտաքննութեարքի շինարարությունը պետք է ընթանա ծրագրված կերպով :

7. ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ՀԱՐՑԵՐԸ

Բաղաբի տնտեսության Հիմնական խնդիրներից և քաղաքային տրամադրության հիմքը:

Քաղաքի տրանսպորտի զործում առաջնակարգ նշանակություն
ունի տրամվայի կառուցումը։ Տրամվայը հազորակցության տրե-
հմանական ձևունարկություններից մեկն է, որը կառուցման
ուժեղմաքայլ է հաղորդակցության հարմարագույն և եժան սպասար-
կում՝ ազգաբնակության համար։ Նրա կառուցումը պետք է որ առաջ
ավարտել, իրեն ամենահարվածային խնդիր։ Հազորդակցության մի-
ջոցներից տեսակետից Յերևանը գտնվում է չափազանց անմիտիթար-
միւնակի մեջ, եժան մասաբական հազորդակցության միջոցների բա-
ղակացությունը չափազանց բացառաբար է անդրադառնում ազգա-
բնակության գործնական աշխատանքների վրա։

Կան մարդկիկ, վորոնք կարծում են, թե մենք իրաւու ենք անցնել տրամադաշի շնարարությանը։ Նրանք գերապատվություն են տալիս ավագործուացին հազրարակցությանը, հրապարակ բերելով յելքուու կան մի քանի բաղադրելի փորձերը, վորոնք տրամադաշից, անցնում են փախադրական ավագործուացին մեզն։ Այս տեսակետն առանձնապես Յեղանակի համար սիրալ է։ Նախ մեզ մոտ հազարդակցություն այդ յերկու ձևերը չպիտի հակազերել միմյանց։ Անհրաժեշտ ե թե մեկը և թե մյուսը։ Յելքուու կան այս կամ այն քաղաքում տրամադաշի տեղի յետքու ավագործուին, վորովիշետե այսակ չկա այն չափազանց եժան եւ թեկուուններին, վոր մենք ունենք Յերեանում և այլիւ եժան կերպով սուսնայու մենք Սևանի-Զանգեցի պրորեմի լուծմամբ։

Մեզ մոռ փոխադրական միջոցների համար առաջին հերթին պետք է ոգունքը լինի կատուն-և ներգիտան։ Տրամվայի կառուցումը մենք ուղարկել ենք։ Առաջին հերթին տրամվայի միջոցով պետք է կտվենք քաղաքի կենտրոնն արդյունաբերական շրջանի հետ, ստեղծելով փոխադրական հարաբերություններ բանվորության համար՝ արագ կտադրություն էր զործագրանի հետ տրամվայը միաժամանակ պետք է կարգի քարարանի և համալսարանի թաղի հետ։ Մենք պետք ենք անհաջման այս

տարի ավարտենք տրամվայի կառուցումը։ Քաղսորհուրդը վորոշել է տրամվայի նախատեսված գծի կառուցումն ավարտել այս տարվա յոյթեմբերի 29-ին։ Հայաստանի խորհրդայնացման տարեղարձին։ Խոսք չկա, զոր տրամվայիների կառուցումը քաղաքներում առաջ և բերելու հսկայական հեղաշրջում տեմպի տեսակետից և հրմնովին փոխութ քաղաքի պատկերը դորձնական կյամքի արագության տեսակետից։

Քաղաքի հազորդակցության գործում հիմնական նշանակությունը ունի ավաստանապրտը։ Ավտո-տրանսպորտի կազմակերպման գործը պիտի լինի կոմունալ անտեսության ուշադրության կենտրոնում։

Ավտու տրանսպորտի լայն կազմակերպման և քաղաքի սպասարկումն այդ տեսակետից ապահովելու դորձին մենք պետք ե անցնենք լայն մասշտաբով։ Իհարկեց կարև ժամանակամիջոցում մենք չենք կարագ ամսութանապորտի գործն այնպէս կազմակերպել և այնպիսի բարձրության վրա դնել, վոր նա լիսին կարողանա սպասարկել թե մեր տնտեսության և թե ազգաբնակության անընդհատ աճող պահանջները։ Դա առաջիկա մի քանի տարիների խնդիր է, վոր պահանջում է հսկայական կազմակերպչական աշխատանք և նյութական խորոր ներդրումներ։ Սակայն այս տարի մեր առաջ պետք ե գնենք ավելի սահմանափակ խնդիր և որ-պատճ լուծենիք այդ՝ մեր բոլոր հնարավորությունները լիսին ողտադրծելով։ Նախ պետք ե աշխատենք տարվա ընթացքում ավարտել խոշոր ավտո-գարաժի կազմակերպումը կոմունալ տնտեսության գծով, Սայուլտրանսի ովտուրանսպորտն ապրանքատար ավտոներով կոմպլեկտավորելուն զուգընթաց։ Պետք ե ուժեղացնենք ավտոբուսային յերթեվեկությունը, ձեռք բերողով այս տարի ժի քանի նոր ավտոբուսներ՝ բացառապես քաղաքին սպասարկելու համար։ Այս տարի պետք ե հիմք գնել քաղաքում տաքսիզագիսի գործիքն. Քաղաքուրուրդը վտրուչել ե այս տարի ձեռք թերել մոտ 20 տաքսի։ Ներշան առ չափազանց համեստ թիվ ե, տակայն կոնենա կարևոր համակառնություն, և դրա հիման վրա հետադարձում դարկ կտրվի այդ տարեկող գործին։

Այսպիսով, տրամփային հարակից, վոր, բացի մարդկանց կոփառելուց, պիտի սպասարկի նաև ապրանքների փոխազդմանը (տրամփայի գիծը կառուցվում է այնպես, վոր մանավանդ գիշելները հնապար լինի յերկաթուղու ապրանքատար վաղոնների յերթևեկությունն ույս գծերի վրայով), կոմունալ տնտեսությունը պետք է լուծի ավտոտրանսպորտի չափազանց կարևոր իննուրը, իբրև առաջնակարգ խնդիր:

Այսուեղ անհրաժեշտ է ծանրանալ նաև կոմունալ տնտեսության մի առաջնակարգ խնդրի վրա Հաղորդակցության բնագավառում, վորքուաց լուծումը, իբրև հրամայական պահանջ, զնում և միաժամանակ գրանցուածքի կազմակերպումը։ Դա փողոցների կանոնավորման, առաջնակարգման և մարթերի հաճոնացոր կառուցման սովորն է։

Սահմանադրության մասին օրենքը կատարած է պահանջված գործունեությունը:

Հայունի յեւ, վոր քաղաքիւմ ունը Յարմառում : Հայունի յեւ, վոր քաղաքը կառուցվում և նոր հասակագծով, ուստի բացվում են նոր, լայն փողոցներ : Այդ փողոցների ձևակորումը իմաստան խնդիր է՝ դրված մեր առաջ : Մենք հին Յերեանը հիմնովին անդում ենք, վորովհետեւ նրա մեջ չկա մի բան, — չնչին բացառություն, — գոր պետք գտ սոցիալիստական քաղաքին : Առհասարակ նոր

բաղաք կառուցելիս պետք է այն համակաղմածել, կառուցվող բոլոր հաղոցները սալահամատակել, անցկացնել կոյսովի, զրմուղ և ապա նոր անցնել շնչերի կառուցման գործին—այդ իրեն նախապայման իրազսրծել Յերեամի համար անկարելի յե: Այդ՝ Քաղիորհուրդը ծրագրում և անել քաղաքի այն արվարձաններում, վորտեղ կառուցումներ բոլորովին չկան, ուստի փողոցների ձևափորման խնդիրը մեր սահմանադրության հարակից: Փողոցների հիմնական ձևափորումը, սրանց սալահամատակումն ու մայթերի կառուցումը պետք է տարվի պլանային ձևով ու արագ տեժապերով:

Այս հսկայական խնդրի բավարար լուծումը պահանջում է խաչորակում ներդրումներ, զորի իրականացումը վեր է Կոմունալ Տնտեսության Փինանսական հնարակորություններից: Այստեղ պետք է հրապարակ գա հավաքական ուժը: Մեր բոլոր մասեսական որպանները, փորոնք շահագրգումած են նրա լուծմամբ, պետք է հրապարակ դան իրենց տնտեսական լայն աշակցությամբ: Բաղմաթիվ տնտեսական հիմնարկներ տարեց-տարի կրում են խոչոր կորուստներ մեր փողոցների և ճանապարհների անրաբեկարդ վիճակի պատճառով և յեթե այդ կորստի մի մասով մասնակցեն այդ շնչարարությանը, թե դարձի կոտն այդ կարևոր գործին և թե կոնտանտն խոչոր գումարներ: Այս տարի կոմունալ Տնտեսությունը նախատեսում է կազմի բերել և աշխատակել այն փողոցները, զորոնցով անցնելու յե տրամադրյամ: Այս այս տարի հսկայական աշխատանք է, զոր պետք է դրուի բերել հավաքական ուժերով: Մեր յերկիրը, զոր չափաղանց հարուստ է դրանիւսով և դրանիւսի կուրիկներ և ժամակարարում ուրիշ քաղաքական շնչարարության համար, պետք է լայն գործի տալ արդյունաբերության այդ ճյուղին, և Յերեանը պետք է անցնի սալահամատակիման այդ չափաղանց հիմնարկներին: Կոմունալ Տնտեսությունը պետք է կաղմակերպի այդ գործը անհրաժեշտ տեսական պահանջներին:

8. ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԸ

Յերանը բնակարանային տեսակետից տռամճնակի ծանր պիճակի մեջ է: Տարեցտարի կառուցվող և կառուցվելիք արդյունաբերական ձևնարկները, գործարանները, դպրոցական ցանցի լայնացումը և նորանոր բարձրագույն դպրոցների կառուցումը թ. Հայաստանի առարքեր ընդուներից կենտրոնացնում է Յերեանում աշխատավորական նարանոր մասսաներ՝ իրենց բնակարանային անհրաժեշտ նոր պահանջներով:

Չնայած բնակարանային համեմատական լայն շնչարարությանը Յերեանում, այնուամենայնիվ պահանջն որեցոր ավելանում է: Խորհրդակին իշխանության սրով Յերեամի ազգաբնակությունն ավելի քան յեռապատկել է, յեթե նրա վրա ավելացնենք և այն հանգամանքը, վոր համեշխարհային պատերազմի ընթացքում և Դաշնակցության քայլացիք տիրապետության որոք, չնորիվ ազգամիջյան փոխադարձ բնաշնչան քաղաքականության, յեղած բնակարանային Փոնդի մի խոչոր մասը գոչնչացվել է, ապա պարզ կլինի, թե ինչո՞ւ մեր շնչարարությունն այդ բնակարապում չի կարողանաւ հասնել յեղած հսկայական պետականիւնում:

Համաձայն հնդտմայտ ոլորմի, բնակարանային շնչարարությունը պիտի ունենաւ հետեւ գարզացնումը Յերեանում:

	28-29 թ.	29-30 թ.	30-31 թ.	31-32 թ.	32-33 թ.
Տարածություն տարվա					
մկղեից	180,887	206,817	238,203	273,297	319,099
Պաշտմ.	4,070	4,654	5,360	6,148	7,178
Նոր առածություն .	30,000	38,040	40,454	51,950	65,777
Տարածություն տարվա					
վերջը	206,817	238,203	273,297	319,099	377,698
Վզգացնական թյուն					
շանակը	80,913	87,790	95,252	103,348	112,113
Միջին նորման ըստ					
շնչ	2,51	2,71	2,87	3,09	3,37

Ի՞նչ պատկեր ենք ունեցել մենք հնդամյակի յերրորդ: տարում: 30-31 թ. Տարվա սկզբի տարածությունը յեղել է 217,649, մաշում՝ 4,897, նոր չինարարություն՝ 38,800, տարածությունը տարվա վերջն՝ 251,300, տղարնակության քանակը՝ 102,300, չնչի միջին նորման՝ 2,45:

Այսպիսով այս բնակավառում մենք վոչ միայն չունենք հնդամյակի նախատեսումների գերավատարում, այլև կա վորոշ, թեն քիչէ, թերակատարում: Նման յերկույթը միանդամայն անհանդուրժելի յետին հսկայական կարիքների հանդեպ, վոր մենք ունենք բնակարանային հարցում: 1932 թվականը անհրաժեշտորեն պիտի դառնա հիմնություն բնեման ըջան այս բնակավառում: Այստեղ մենք հրապարակ հանձնությունը իսկական բայլշեկիրյան տեսակեր, մենք պետք է նպատակ դնենք լրիվ ապահովելու ցենզային արդյունաբերության բանվորությանը բնակարաններու հարաբերությունը:

Ճիշտ է, կոմունալ բնակարանային շնչարարությունը և կոռպերատիվ շնչարարությունը գեուես չեն ծավալել իրենց աշխատանքներն այն չափություն, վոր անհրաժեշտ է: Սակայն սխալ կլիներ կարծել, վոր կոռպերատիվ և կոմունալ բնակարանային շնչարարությունը կարող կլինել լուծել գրված ինչիները: Այդ հարցի լուծման համար պետք է աշխատավայր գա արդյունաբերական շնչարարությունը:

Արդյունաբերությունը պարտավոր է այս խնդիրը դնել իր գործական աշխատանքների մեջ և, արդյունաբերական շնչարարության գուղքնթաց, լայն մասշտաբով անցնել բանվորական բնակարանային չենարարության, լիովին բավարարելու համար իր բանվորների պահանջը: Նույնը կարևոր յե ասել և մեր ԲՈՒՀ-երի ու տեխնիկումների չենարարության գործի մասին, վորի ընթացքում խոչոր ուշադրությունը պետք է դարձի ուսանողների և պրոֆեսորների հանրակացարանների կառուցման վրա:

Այսպիսով, վորվեսդի մենք կարողանաք ծանկել այն բացը, վոր ունենք բնակարանային շնչարարության բնագավառում և դրան գուղքնթաց բավարարաբեր անող, պահանջները, անհրաժեշտ է, վոր կոմունալ տնտեսությունը և կոռպերատիվ բնակարանային շնչարարությունը՝ մի կողմից, արդյունաբերությունը ու պետական հիմնարկները մյուս կողմից, հրապարակ գան ուժանդաների վերը այս խնդիրի հաջող լուծմանը: Մեր կոռսակցության հունիսային պլանումը իր վարչությունը ուրիշ է:



խնդիրների շարքին, այս խնդիրը գրել և բրնձ մարտական խնդիր, մեր կուսակցության որդանների և խորհրդային ազգարատի առաջ:

Մի քանի խոսք բնակարանային շինուարության բովանդակության մասին: Պարզ է, վոր մեր բնակաբանային շինուարությունը պետք է տարվի այն ուղղությամբ, վորպեսզի նպաստի սոցիստիսական կենցարդի կազմակերպման ու զարգացմանը, նա պետք է ամենից առաջ կառուցվի անհրաժեշտ հարմարություններով, մի բան, վոր շատ դեպքերում պակասում է մեր բնակարանային շինուարության մեջ: Նա պետք է կառուցվի այնպես, վոր ունենա ընդհանուր սեղանաներ, լվածքաներ, մանկապարտեղներ, մանկական հարաբերություններ, մսուրներ և այլն, վորոնք նպաստում են սոցիալիստական կենցարդի զարգացմանը, ազատում են կողմը տնային մի շարք հոգսերց և հնարավորություն տալիս նրան ներդրավվելու մեր արդյունաբերության մեջ, դժուդատնուեսական աշխատանքներում և կուլտուրական Փոռտում:

9. ԿՈՒԼՏՈՒՐԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Դպրոցական շինուարությունը քաղաքացին՝ տնտեսության մեջ պիտի կազմի հիմնական հարցերից մեկը: Կաղըերի պատրաստումը սոցիալիստական տնտեսության համար անհրաժեշտություն ծառակաց և մեր առաջ կառքերի պատրաստման դործը Յերեանում չի դրված իր անհրաժեշտ բարձրության վրա, առաջին հերթին՝ դպրոցական շենքերի պահանջառության պատճառով: Մենք ունենք դպրոցական շենքեր, որ պարագաւ են յերեք-չորս հերթի. շատ անհրաժեշտ շենքերի մեջ տեղափոխված են մի քանի դպրոցներ, վորպիսի դրությունը չափանց վատ և անդրադառնում կաղըերի պատրաստման վրա, առանձնապես վորպի տեսակետից: Տասն և մեկ տարվա ընթացքում Յերեավանում կառուցվել են մի քանի դպրոցական շենքեր միայն: Այժմ պիտի ձեռք առնվիճ գործնական միջոցներ այս և հետագա տարվա շինուարության ընթացքում այս բացը վերացնելու համար: Քաղաքը պիտի համապատասխան քանակի դպրոցական շենքերով և նրանք պիտի կառուցվեն և դասավորվեն այնպես, վոր հնարավորություն ունենան նպատակահարմար կերպով ծառայել կաղըերի պատրաստման դործին:

Յերկրորդ խնդիրը՝ կուլտուրական շինուարության բնագավառում՝ մեր բնակիտումների, զպլոցների և տնինիկումների ուսունակացարաններով ապահովելու հարցն է: Այս բնագավառում, ճիշտ և, կատարվում է հսկայական շինուարություն, առկայն այն ներկայումս չի կարողանում բավարարել որըստոք աճող հսկայական պահանջները: Առաջին խնդիրը, վոր դրված և մեր առաջ, այս հարցի լուծման տեսակետից, այս տարի հարվածային կարգով սկզբած և սկսվող հանրակացարանների ժամանակին, այսինքն՝ միունքն ուրոց դպրոցական տարին՝ սեպտեմբեր ամիսը՝ արվարելու հետո:

Գետաթարունի արագ կառուցման հարցը մեր հիմնական հարցերից մեկն է: Ժողովուրդներ և կենտրոններ իրենց հունվարի 12-ի վորոշմամբ, նկատի ունենալով այն հսկայական կարիքը, վոր ունի թատրոնական շենքի տեսակետից Յերեանը, առաջարկել են Յերեանի Գետաթարունը:

Կառուցող կոմիտեի «ուժեղացնել շինարարական աշխատանքների թափն այն հաշով, վորպեսզի 1933 թ. վերջում թափոնը հանձնվի սդագործման, 1932 տարում վերջացնել քարի աշխատանքները»: Հետագայում կառուցելով նաև այլ թափոնական շենքեր:

Կիսոների կառուցման դործը մեղանում աշխատող է արված: Մինչդեռ կիսոն տարեցտարի կանարան նվաճումներով արվեստի այն ճյուղն է, վոր լայն մասսաների դաստիարակման դործուածի մրցակիցը չունի: Այս տարի անպարմանը ուրուեն մենք պիտի կառուցենք նոր հսկոր կենու-շենք, սակայն մի նոր շենքով չպիտի բավարարվել քաղաքն իր բոլոր մասերում պիտի ունենա կիսոն շենքեր՝ բավարարելու համար որեցոր աճող պահանջը: Պետք է զարկ տալ նաև ակումբային շինարարությանը, վորի մեջ մենք հետ ենք մասնիկ: Մեր ՀՍՄԽ-ին այդ գործի կազմակերպութը պիտի զնի իր աշխատանքների առաջնորդը: Անհրաժեշտ է առանձին ուշադրություն գլխավորի այդ շինարարությունը: Անհրաժեշտ է առանձին ուշադրություն գլխավորի առաջնորդը:

Անհրաժեշտ է ծագալի խոշոր աշխատանք գրադարանային և թանգարանային շինարարության ուղղությամբ: Թե՛ պետական գրադարաններ և թե՛ թանգարաններ չենքերը չափազանց ունավարագր են և անհամապատասխան: Մեր կուսակցությունը պիտի անցնի այս դործին: Քաղաքությունը ևս պիտի կառուցի մունիցիպալ թանգարանի շենքը: Այս տարի անհրաժեշտ է ավարտել կովկասագիտական գրադարանի շենքը և օկտել պետական թանգարանի կառուցումը: Այս բնագավառներում համապատասխան շենքերի բացակայության պատճառով, մենք կանգնած ենք աղաղակող պահանջների առաջ:

Այս տարի պիտի սկսել Գիոներական Տան կառուցումը՝ իր ընթերցանով և թարգումով: Մեր պիոներական կազմակերպությունն ամենայն իրավամբ դրել է այդ խնդիրը քաղաքացի առաջ: Մեր պիոներական հսկայական բանակը չունի իրեն արժանի պիոներական տունը. այս բացը պիտի արագ կառուցի ծածկել:

Միաժամանակ քաղաքի առաջ ծառացած է Փիզկուլտուրական ստագիտների կառուցման հարցը: Մեր մատաղ սերնդի և յերիտասարդության, ինչպես նաև հսկակալոր աշխատավորների Փիզկուլտուրական գաղտնաբառակության ինստիտուտը կարեւոր նշանակություն ունի: Ֆիզկուլտուրայի զարգացման ու ամբազնդրման դործը պիտի զնի համապատասխան պայմանների մեջ: Մեր Դինամոն արդեն ձեռնարկել է խոշոր ստագիտնի կառուցման դործը. նախ՝ պիտի լարել բոլոր ուժերը և համախմբել միջոցները, ապահովելու այդ ստագիտնի արագ կառուցումը: Միաժամանակ այս տարի ձեռնարկել Փիզկուլտուր դժուարուցիք ստագիտնի աշխատանքները: Բացի դրանից, քաղաքի զանազան մասերում պիտի կառուցել մի շարք Փիզկուլտ հրապարակներ:

Սոցկուլտ. շինարարության բնագավառում առաջնակարգ սեղ պիտի տրմի հիմնադանոցային շինարարությանը: Հասարակական ա-

ուղագառական բնակիրները սպասվուասկան քուղազւ պիտի ըստի ըստի ըստի կերպով։ Առանձնահատուկ ուշագրամյան պիտի զարձիլ քա-
շափ վեսպանուերիբացիայի վրա։ այդ շինարարաւթյանը պիտի ըն-
թառա ծրագրված ձևով, համապատասխան մեր ավատակավորության
դրահաններին։ Այս տարի անգայթան պիտի վերջացնել ուսւր վարու-
թիչ հիվանդությունների հիվանդանոցը, դեղինֆեկցիան կայան,
ոկտել հոգեկան հիվանդների հիվանդանոցի և յերիխանների կլինիկայի
հասուցումը։ Այս տարի Առողջապահութիւն գծով ծրագրված ե խոչըր շի-
նարարություն։ Այդ այստանքները պիտի կատարել անհօգեաց-
ումպավագ։ Թեև առասարակ հիվանդանոցային շինարարաւթյունն ունի
խռոչոր նվաճումներ, սակայն այդ ընադավառում կան խոշոր բացեր,
զարանք պիտի վերացվեն անհարժեշտութեամբ։

10. ՀԱՍՏՈԿԱԿԱՆ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՅԵՎ. ՄՆՆԴԻ ԽՄԴԻՐՆԵՐԸ

Քաղաքային տնտեսության մեջ ահա մի ընտալիքառ, ուր հսկայական անելիքներ կան: Հասարակական մատակարարման ու անդի խնդրի վրա Քաղխորհուրդը պահանջվող ուշադրություն չի դարձրել. այնինչ այդ գործի լայն կազմակերպութից խոչըր չափով կատարծ և արդյունաբերական ու կուլտուրական վերելքը: Հասարակական ոննդի ու մատակարարման հսկայական գործը պիտի լինի քաղխորհուրդի պար-
ծունեցության առանցքում: Անհրաժեշտ է այս խնդիրների լուծման պրոցեսում հիմնական աշխատանքներ կատարել մի քանի ուղղու-
թյունը:

Ծուկաների շինարարության խնդիրն այժմ գրված և կոմունալ տնտեսության սուսաջ իրբե անմիջական խնդիր։ Մենք պետք են որ ոռաջ ազատազգվենք հոչակալոր «Ղանթարից»։ Ղանթարի շրջանը մենք չիմուլին ճաքրում ենք, ազատելու համար քաղաքն այդ կեղտի բռնշնդիք էնց։ Բնականորեն՝ խորհրդային չուկայի խնդիրը դարձել է անմիջական խնդիր, սակայն չուկաներ կառուցելու խնդրություն մենք պիտի ունենանք այնպիսի գիծ, վոր ազգարնակության համար ստեղծվեն լայն հարժարություններ։ Խորհրդային չուկաները պիտի կառուցվեն քաղաքի տարբեր մասերում և վոչ թե մի տեղ։ Այս տարի կոմունալ տրնտեսությունը ծրագրել է քաղաքի տարբեր մասերում կտրուցել յերեք նոր, հարմար, խորհրդային չուկաներ, մոտեցնելով չուկաներն ազգաբնակությանը։ Եռուկաների կառուցումը հետազոտարինների ընթացքում պիտի ընթանա այդ ուղղությամբ։

Մեր սոցիալիստական կենցաղի դարգացման ու սննդի լավ մատուցաբարման տեսակիները հիմնական նշանակություն ունի Փարբեկախոհանոցներ ու մեքենացված խոցոր ճաշարաններ կառուցելու դորձը։ Այս բնադրավառում մենք չատ հետ ենք մնացել, այլպիսի հիմնարկելու մենք չունենք. մեր քաղաքը և, առաջին հերթին՝ գործարանները պիտի պատենք մաքուր, սանիտարական ուղայմաններին համապատասխան սեղանատներով. առանց զբան նորմալ հասարակական սնունդը կզգման ունեած, անհարուի իւ։

Այս տարբի հասարակական սննդի զծով ծրադրված և կառուցել մի-
մի Փարբիկա-խոհանոց բանվորաակն-դործարանային ըղաններում և
քաղիսորեցրդի կոմունալ տնտեսության զծով՝ մի խոշոր մեքենայաց-

ված ճաշարան՝ ուսանողական թաղամասում, վորն ուսանողության համար բաց է թողնելու որական 10-15.000 ճաշ։ Երանց կառուցումը պիտի ապահովել վորպես մինիմալ պահանջ։

Հատուկ ուշադրություն պետք է դարձնել խանութային շինարարության վրա։ Դրա կարիքը հսկայական է։ Այդ աշխատանքը պիտի ծանրանա կոմունալ տնտեսության, Հայոցու և Հայութ վրա։ Վեր շիններս պիտի անցնեն ծրագրված խանութային շինարարությանը։

Սթերքների հարմար պահեստների կառուցման գործի վրա գոչ վոչ վոչ
ուշադրություն չի դարձնում, իսկ դա հասարակական սննդի կարևո-
րագույն խնդիրներից է: Այս գործն անպայման պիտի դարձնել հեր-
թական և անցնել պահեստների կառուցմանը: Եաւ անգամ հարմար
պահեստների բացակայության պատճառով մեր լավագույն մթերքնե-
րը փշանում-վոչնչանում են, կամ թե չե՛ բանվորությանը կերակրում
ենք վատ հատկության մթերքներով: Մա անհանդուրժելի յե: Սո
վհասարարության հանող հանցանությունն է. սրա առաջը պետք և
տոնել ամենախիստ և կարուկ միջոցներով. մեր մթերող որդանները
և հասարակական սուսնդը պիտի անմիջապես անցնեն պահեստների
կառուցման գործին:

Հսկայական նշանակություն ունի մերձքաղաքային տնտեսությունների լայն կազմակերպումը՝ հասարակական սուունդը բարեկալիրու և քաղաքը թարմ մթերքներով առահճովելու տեսակետից։ Մերձքաղաքային յերկու տնտեսությունն եւ, թէ՛ անառնապահական և թէ՛ բանչարաբուծական, այնքան եւ միիթարական վիճակի մեջ չեն, յեթե ավելին չափանիք, և չեն կարողանում գեթ մինիմալ չափով բարգարաբել քաղաքի կարիքները։ Նախ՝ գրանք կառուցված են մեր արդյունաբերությանը հատկացված տերիտորիայի վրա և վոչ ժիայն զարգացման հեռանկարներ չունեն, այլև յենթակա յեն լիկվիդացիայի։ Աւատի անհրաժեշտ և այս տարվանից այդ խնդիրները լուծել արմատապես։ Անասնապահական տնտեսությունը պետք է փոխադրել անմիջապես Զագ-Իլլիջա։ Իլլիջայի խոշոր խոտհարքների և հազարակոր հեկտար արոտների վրա պետք է զարգացնել անասնապահական մերձքաղաքային տնտեսություն՝ քաղաքը թարմ կաթով ապահովելու համար, իսկ Զագն աստիճանաբար վերածել պաղաքուծական մերձքաղաքային տնտեսության։ Ինչ վերաբերում է բանջարաբուծական մերձքաղաքային տնտեսությանը, այն առաջիկա յերկու տարվա ընթացքում պետք է տեղափոխել նորագավթից և ապահովել մշտական՝ համապատասխան քանակի հողամասերով, զորակեցի հնարագոր լինի կազմակերպումներ անել։ Սակայն խոշոր ուշադրություն պիտի դարձնել այս տնտեսությունների լայն կազմակերպման գործի վրա. Դրանք քաղաքի տնտեսության, առանձնապես սննդի մատակարարման հիմնական ազդակներից են։ Այդ տնտեսությունները պիտի ապահովել թէ՛ կապիտալ ներդրումներով, թէ՛ ըրջանառության գումարներով և թէ՛ կազմակերպչորեն։

Հայկոսպը պարտավոր և հատուկ ուշադրություն դարձնել մէրձ-
քաղաքային տնտեսությունների լավ կազմակերպման գործին. պիտի
զարգացնել այդ տնտեսությունների անհրաժեշտ շինարարությունը և
ծագայել նրանց աշխատանքները մաքսիմալ չափերով:

II ՀՆԳԱՄՅԱ ՊԼԱՆԻ ՀԱՐՑԸ

Կանգ չառնելով քաղաքային տնտեսության այլ ճյուղերի վրա, որինակ՝ մի այնպիսի խոշոր ճյուղ՝ ինչպիսին և տեղական արդյունաբերությունը (մենք այդ կկապէնք առհասարակ Յերևանի արդյունաբերական զարգացման հեռանկարների հետ՝ հասուկ հոգվածով), անհրաժեշտ է այստեղ շեշտել քաղաքի տնտեսության զարգացման հնգամյա պլանի խնդիրը:

Յերևան քաղաքը մեր առաջին հնգամյակում չի ունեցել իր տքնախուռական և չինարարության զարգացման պլանը։ Զեն կազմվել առնախուռական տարրեր ճյուղերի շաղկապված տարեկան պլանները, հետևապես՝ չեն յեղել աշխատանքի որացուցային պլաններ։ Այս անհրաժեշտ յերեսությ է։

Կարո՞ղ ենք նույն ձևով շարունակել մեր աշխատանքները։ Անպայման վոչ։ Աւստի քաղաքային տնտեսության յերկրորդ հնգամյա պլան կազմելու հարցը ծառացած է մեր առաջ իրրեւ առանջնակարգ հարց։

Անհրաժեշտ է կազմել քաղաքային տնտեսության յերկրորդ հնգամյա պլանը, վորը սերտ կերպով շաղկապված պիտի լինի քաղաքի արդյունաբերական, կուլտուր-տնտեսական զարգացման ընդհանուր պլանի հետ։ Մենք ներկայում կազմում ենք Խ. Հայաստանի յերկրորդ հնգամյա պլանը։ Քաղաքի հնգամյա պլանը պետք է բղիքի դրանից, կազմի նրա բաղկացուցիչ մասը, քաղաքի ըրմանակում։





ՀՀ Ազգային գրադարան



NL0191840

МРУС 20 400. (1/2 д.)



А. ЕРЗНКАН

ПЕРЕСПЕКТИВЫ РАЗВИТИЯ ЭРИВАНИ
и НАШИ БЛИЖАЙШИЕ ЗАДАЧИ

Госиздат ССР Армении
Эревань—1982

